Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ
3403 ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի,
փ. Գործարարներ 42, հեռ. 0286-60685
email: agarak-hosp@mail.ru

Мегру тарацаштджанаин бжшкакан кентрон ЗАО
3403 РА Сюник марз,г.Мегри,
ул. Горцарарнер 42 тел. 0286-60685

№ 140

"03 " սեպտեմբերի 2019թ.

Ծանուցում

05.02.2019 թվականին կնքված և 12.02.2019 թվականին ֆինանսական միջոցների առկայության մասին համաձայնագրի միջոցով ուժի մեջ մտած N ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7-3 ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ

‹‹Մեղրու տարածաշրջանային ԲԿ›› ՓԲԸ-ն այսուհետ՝ <<Գնորդ>>, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա , սույնով <<Ջի Թի ՍԻ>> ՍՊԸ-ին , ի դեմս տնօրեն Է. Փոթոյանի , ծանուցում է հետևյալի մասին

‹‹Մեղրու տարածաշրջանային ԲԿ›› ՓԲԸ-ն 14.08.2019թվականին gtc.llc@yandex.ru էլեկտրոնային հասցեով պատվիրել է վերոնշյալ պայմանագրում ներառված աղյուսակ 1-ում նշված ապրանքը :

Աղյուսակ 1

Հերթա-կան	Գնման առարկան	Չափի միավոր	Քանակ
1	Արյան փոխներարկման համակարգ 150սմ (система)	հատ	1000

Համաձայն N ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7-3 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույցի (հավելված 1), վաճառողը պարտավորվում է գնորդի կողմից յուրաքանչյուր պատվերը ստանալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել նշված քանակի ապրանքը: Ըստ պայմանագրի վաճառողը գոնե մինչև 29.08.2019 թվականը պետք է մատակարարեր ապրանքը (երեք աշխատանքային օր ըստ հավելված 2-ի և 5-ական օր ըստ պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 բ) կետերի), սակայն 02.09.2019թվականի դրությամբ վաճառողը

հրաժարվում է ապրանքը մատակարարելուց, պատճառաբանելով , որ իրենք ունեն խնդիրներ իրենց մատակարարի հետ և իրենց պահեստում չունեն նշված ապրանքից:

Այսպիսով վաճառողը խախտել է ոչ միայն պայմանագրի 1.1, 2.1.1 կետում նշված ժամկետները, այլ նաև 2.1.7.1 բ) կետում սահմանված ժամկետը, որտեղ ասվում է , որ Գնորդն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5, օրից ավելի: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ‹‹Մեղրու տարածաշրջանային ԲԿ›› ՓԲԸ-ի և <<Ջի Թի ՍԻ>> ՍՊԸ-ի միջև կնքված N ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7-3 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետով, սույնով ծանուցում ենք , որ ‹‹Մեղրու տարածաշրջանային ԲԿ›› ՓԲԸ-ն միակողմանի լուծում է պայմանագիրը N1 հավելվածի 1 չափաբաժնում նախատեսված Արյան փոխներարկման համակարգ 150սմ (система)-ի մատակարարման մասով:

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի N526-Ն որոշման 33-րդ կետի 16-րդ ենթակետի Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>>ՓԲԸ

Տնօրենի ժ/պ Ա. Օհանջանյան